

ՀԱՐՑԱՇԱՐ

Միջազգային իրավունք առարկայի մագիստրատուրայի ընդունելության

1. Միջազգային իրավունքը՝ որպես ինքնուրույն իրավական համակարգ: Միջազգային հանրային իրավունքի և միջազգային մասնավոր իրավունքի հարաբերակցությունը:
2. Միջազգային-իրավական պատասխանատվության սուբյեկտները, ֆիզիկական
3. անձանց միջազգային քրեական պատասխանատվությունը:
4. Միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցությունը:
5. Պետությունների պատասխանատվության բովանդակությունը, վնասի
6. հատուցման տեսակները և ձևերը:
7. Պատասխանատվությունը ցեղասպանություն միջազգային հանցագործության
8. համար:
9. Արտաքին հարաբերությունների ներպետական և արտասահմանյան մարմինների համակարգը:
10. Ժամանակակից միջազգային իրավունքի ձևավորումը և զարգացումը:
11. Միջազգային իրավունքի սուբյեկտի հասկացությունը և տեսակները:
12. Միջազգային իրավունքի սկզբնական և ածանցյալ սուբյեկտներ:
13. Միջազգային իրավունքի աղբյուրների հասկացությունը և տեսակները:
14. Միջազգային իրավունքի նորմերի հասկացությունը, կառուցվածքը և դասակարգումը:
15. Միջազգային իրավունքի նորմերի ստեղծման գործընթացը:
16. Իրենց անկախության համար պայքարող ազգերը և ժողովուրդները՝ որպես
17. միջազգային իրավունքի սուբյեկտ:
18. Պետությունների միջազգային իրավասուբյեկտության բովանդակությունը:
19. Հայաստանի Հանրապետությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ:
20. Միջազգային կազմակերպությունները՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ:
21. Միջազգային պայմանագիրը՝ որպես միջազգային իրավունքի գլխավոր և հիմնական աղբյուր:
22. Միջազգային իրավական սովորույթը՝ որպես միջազգային իրավունքի հիմնական աղբյուր:
23. Ճանաչման ինստիտուտը միջազգային իրավունքում: Ճանաչման տեսակները և ձևերը:
24. Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների հասկացությունը:
25. Ուժ և ուժի սպառնալիք չկիրառելու սկզբունքը:
26. Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման և իրավահավասարության սկզբունքը:
27. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքը:
28. Տարածքի տեսակները միջազգային իրավունքում:

29. Պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը:
30. Պետական տարածքի կազմը և իրավական ռեժիմը: Դելիմիտացիա և
31. դեմարկացիա:
32. Միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքը:
33. Տարածքային փոփոխությունների իրավական հիմքերը:
34. Տարածքային ամբողջականության սկզբունքի նորմատիվ բովանդակությունը:
35. Միջազգային պայմանագրերի իրավունքի հասկացությունը և աղբյուրները:
36. Միջազգային պայմանագրի հասկացությունը, իրավաբանական բնույթը և
37. տեսակները: Պայմանագրի ձևը (պայմանագրի լեզուն, անվանումը և կառուցվածքը
38. Միջազգային պայմանագրերի կնքման փուլերը: Լիազորություններ:
39. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման միջոցները: Միջազգային վեճ և
40. վիճելի իրավիճակ:
41. Վերապահումները և հայտարարությունները միջազգային պայմանագրերի
42. վերաբերյալ: Պայմանագրերը և երրորդ պետությունները:
43. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման հաշտեցման ընթացակարգը:
44. Միջազգային պայմանագրերի վավերությունը: Անվավերության տեսակները:
45. Միջազգային վեճերի դատական ընթացակարգը: Միջազգային արբիտրաժ:
46. Միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելը: Միջազգային պայմանագրերի
47. գործողությունը ժամանակի մեջ և տարածության վրա:
48. Միջազգային մարդասիրական իրավունքի հասկացությունը և աղբյուրները:
49. Միջազգային պայմանագրերի մեկնաբանության ձևերը և եղանակները:
50. Զինված ընդհարումների տեսակները:
51. Միջազգային պայմանագրերի գործողության դադարեցումը:
52. Զինված ընդհարումների մասնակիցների իրավական վիճակը:
53. Միջազգային կազմակերպությունների հասկացությունը, դասակարգումը և
54. իրավական բնույթը: Միջազգային կազմակերպությունների կառուցվածքը:
55. Մարդու իրավունքների պաշտպանությունը զինված ընդհարումների ժամանակ:
56. Միջազգային կազմակերպությունների հատկանիշները:
57. Միջազգային անվտանգության իրավունքի հասկացությունը և սկզբունքները:
58. Միջազգային կազմակերպությունների իրավասությունը: Որոշումների
59. ընդունման ընթացակարգը միջազգային կազմակերպություններում:
60. Համընդհանուր անվտանգության համակարգի հասկացությունը և էությունը:
61. Միացյալ Ազգերի Կազմակերպություն. նպատակները և գործունեության
62. հիմնական ուղղությունները:
63. Տարածաշրջանային անվտանգության համակարգեր:
64. ՄԱԿ-ի հիմնական խնդիրները և կառուցվածքը:
65. ՄԱԿ-ի գլխավոր մարմինները:
66. Մարդու իրավունքների բնագավառում պետությունների համագործակցությունը:
67. ՄԱԿ-ի մասնագիտացված հաստատությունները:
68. Միջազգային հանցավորության դեմ պայքարի հասկացությունը և ձևերը:

69. Տարածաշրջանային միջազգային կազմակերպություններ:
70. Քրեական գործերով իրավական օգնության տեսակները:
71. Միջազգային իրավախախտումների հասկացությունը և դասակարգումը:
72. Քաղաքացիության միջազգային-իրավական հիմնահարցերը:
73. Միջազգային իրավական պատասխանատվության հասկացությունը և հիմքերը: